ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» Մարտի 2024 թվականի N 899-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՍԱՐՄԵՆ ԳԵՂԱՄԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ԵՎ ԱԶԱՏ ՍԱՄՎԵԼԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԾՈՒԼՈՒԿԻՁԵ ՓՈՂՈՑԻ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ N 4 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 69.69 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 109.8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացիներ Սարմեն Գեղամի Բաղդասարյանին և Ազատ Սամվելի Բաղդասարյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ծուլուկիձե փողոցի 2-րդ նրբանցքի N 4 հասցեի բնակելի տան օրինական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված է 69.69 (վաթսունինն ամբողջ վաթսունինն հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, որոնք հաշվառված են Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում N 2023LC8KYX ծածկագրով և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 109.8 (մեկ հարյուր ինն ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված հողամաս, որի վրա առկա շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

Քաղաքացի Ազատ Սամվելի Բաղդասարյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված հողամասի և շինությունների նկատմամբ իրենց սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով, 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1-րդ կետի և հիմք ընդունելով քաղաքացի Ազատ Սամվելի Բաղդասարյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի դեկտեմբերի 14-ին N 26960 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացիներ Սարմեն Գեղամի Բաղդասարյանին և Ազատ Սամվելի Բաղդասարյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ծուլուկիձե փողոցի 2-րդ նրբանցքի N 4 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 69.69 (վաթսունինն ամբողջ վաթսունինն հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:
2. Ճանաչել քաղաքացիներ Սարմեն Գեղամի Բաղդասարյանի (ծնված 1953 թվականի սեպտեմբերի 17-ին) և Ազատ Սամվելի Բաղդասարյանի (ծնված 1972 թվականի մայիսի 23-ին) սեփականության իրավունքը՝ ժառանգության իրավունքով իրենց պատկանող, Գյումրի քաղաքի Ծուլուկիձե փողոցի 2-րդ նրբանցքի N 4 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից, ավել օգտագործվող 109.8 (մեկ հարյուր ինն ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված հողամասի և նրա վրա առկա շինությունների նկատմամբ:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Սարմեն Գեղամի Բաղդասարյանին և Ազատ Սամվելի Բաղդասարյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

25.03.2024

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# ՈՐՈՇՈՒՄ

«25» մարտի 2024 **թվականի** N 898Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՅԿԱՆՈՒՇ ԱՇՈՏԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 4 ՀԱՍՑԵԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ N 1 ԲՆԱԿԱՐԱՆԻ 24.87 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՍԵՆՅԱԿՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ 3 ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Հայկանուշ Աշոտի Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Սարուխանյան փողոցի N 4 հասցեի բազմաբնակարան շենքի N 1 բնակարանի 24.87 (քսանչորս ամբողջ ութսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով սենյակում ինքնակամ ձևափոխված է 3 (երեք) պատուհան:

Քաղաքացի Հայկանուշ Աշոտի Հայրապետյանի կողմից լիազորված Աշոտ Հայրապետյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված շինությունն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 27-րդ կետի, 32-րդ կետի բ ենթակետի, հիմք ընդունելով քաղաքացի Հայկանուշ Աշոտի Հայրապետյանի կողմից լիազորված Աշոտ Հայրապետյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի նոյեմբերի 15-ին N 24638 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Հայկանուշ Աշոտի Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Սարուխանյան փողոցի N 4 հասցեի բազմաբնակարան շենքի N 1 բնակարանի 24.87 (քսանչորս ամբողջ ութսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով սենյակում ինքնակամ ձևափոխված 3 (երեք) պատուհանը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 6948 (վեց հազար ինը հարյուր քառասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Օրինականացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60 օրվա ընթացքում չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Հայկանուշ Աշոտի Հայրապետյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** X **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«25» Հուլիսի 2024 **թվականի** N 897-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐՎԱՆՁԱԴԵ ՓՈՂՈՑԻ N 91 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ 429.32 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 189.92 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ 152.23 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Իսկուհի Սիմոնի Աբրահամյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Շիրվանզադե փողոցի N 91 հասցեի բնակելի տան հողամասին կից 429.32 (չորս հարյուր քսանինն ամբողջ երեսուներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցվել է 189.92 (մեկ հարյուր ութսունինն ամբողջ իննսուներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին 152.23 (մեկ հարյուր հիսուներկու ամբողջ քսաներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Իսկուհի Սիմոնի Աբրահամյանը:

Նկատի ունենալով, որ շինություններին պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չեն գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի և հիմք ընդունելով շինությունը Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող տեղեկանքը N 2023AEUGWJ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Շիրվանզադե փողոցի N 91 հասցեի բնակելի տան հողամասին կից 429.32 (չորս հարյուր քսանինն ամբողջ երեսուներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 189.92 (մեկ հարյուր ութսունինն ամբողջ իննսուներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին 152.23 (մեկ հարյուր հիսուներկու ամբողջ քսաներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունները և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել քաղաքացի Իսկուհի Սիմոնի Աբրահամյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ x Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

25.07.2024

**2024թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«25» [illegible] 2024 **թվականի** N 896-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ԻՍԿՈՒՀԻ ՍԻՄՈՆԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐՎԱՆՁԱԴԵ ՓՈՂՈՑԻ N 91 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 188.38 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 23.24 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Իսկուհի Սիմոնի Աբրահամյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Շիրվանզադե փողոցի N 91 հասցեի բնակելի տան օրինական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված է 184.72 (մեկ հարյուր ութսունչորս ամբողջ յոթանասուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված է 4.74 (չորս ամբողջ յոթանասունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինություններ, որոնք հաշվառված են Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում N 2023QALSMK ծածկագրերով և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 23.24 (քսաներեք ամբողջ քսանչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված հողամաս, որի վրա առկա շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

Քաղաքացի Իսկուհի Սիմոնի Աբրահամյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված հողամասի և շինությունների նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով, 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ կետի, 22.1-րդ կետի և հիմք ընդունելով քաղաքացի Իսկուհի Սիմոնի Աբրահամյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի հունվարի 09-ին N 275 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Իսկուհի Սիմոնի Աբրահամյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Շիրվանզադե փողոցի N 91 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 184.72 (մեկ հարյուր ութսունչորս ամբողջ յոթանասուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները և 4.74 (չորս ամբողջ յոթանասունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 9333 (ինը հազար երեք հարյուր երեսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Ճանաչել քաղաքացի Իսկուհի Սիմոնի Աբրահամյանի (ծնված 1953 թվականի հոկտեմբերի 12-ին) սեփականության իրավունքը՝ ժառանգության իրավունքով իրեն պատկանող, Գյումրի քաղաքի Շիրվանզադե փողոցի N 91 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից, ավել օգտագործվող 4.74 (չորս ամբողջ յոթանասունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված հողամասի և նրա վրա առկա շինությունների նկատմամբ:

3. Օրինականացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60 օրվա ընթացքում չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Իսկուհի Սիմոնի Աբրահամյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

25.03.2024

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«25» Մարտի 2024 **թվականի** N 895-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԵՔՍՏԻԼԱԳՈՐԾՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ N 29/3 ՀԱՍՑԵԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱԿԵՐԵՍԻ ՉԱՓԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տեքստիլագործների փողոցի N 29/3 հասցեի շինությունը և հողամասը սեփականության իրավունքով պատկանում է «Շինարար-97» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, որտեղ հողամասի մակերեսը գրված է 1236.55 (մեկ հազար երկու հարյուր երեսունվեց ամբողջ հիսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր: Չափագրողի որակավորում ունեցող անձի կողմից կատարվել է նոր չափագրություն, որի արդյունքում պարզվել է, որ N 22032019-08-0034 վկայականում նշված հողամասի կողմնային չափերի և կոորդինատների համաձայն հողամասի մակերեսը կազմում է 1232.2 (մեկ հազար երկու հարյուր երեսուներկու ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր:

Փաստաթղթերում առկա անհամապատասխանությունը ճշտելու, մեխանիկական սխալն ուղղելու նպատակով և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հաստատել ԱՁ Գագիկ Սարգսյանի կողմից կազմված, «Շինարար-97» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տեքստիլագործների փողոցի N 29/3 հասցեի շինության հողամասի հատակագիծը՝ 1232.2 (մեկ հազար երկու հարյուր երեսուներկու ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերը նշված հողամասի մակերեսի ճշտման և սեփականության իրավունքի վերագրանցման նպատակով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** x **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«25» [illegible] 2024 **թվականի** N 894-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի N 430-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի փետրվարի 14-ի «Քաղաքացի Էդվարդ Արթուրի Բադալյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկի փողոցի N 33/5 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 476.99 քառակուսի մետր արտաքին 376.1 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունը, 8.1 քառակուսի մետր մակերեսով պարիսպն օրինական ճանաչելու և հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու մասին» N 430-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, քանի որ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը կասեցվել է: Չափագրողի որակավորում ունեցող անձի կողմից ներկայացվել է նոր ճշգրտված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի փետրվարի 14-ի «Քաղաքացի Էդվարդ Արթուրի Բադալյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկի փողոցի N 33/5 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 476.99 քառակուսի մետր արտաքին 376.1 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունը, 8.1 քառակուսի մետր մակերեսով պարիսպն օրինական ճանաչելու և հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու մասին» N 430-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝
   1) Վերնագրում, նախաբանում և որոշման 1-ին կետում «476.99 (չորս հարյուր յոթանասունվեց ամբողջ իննսունինը հարյուրերրորդական)» թիվը և բառերը փոխարինել «362.1 (երեք հարյուր վաթսուներկու ամբողջ մեկ տասնորդական)» թվով և բառերով,
   2) Վերնագրում, նախաբանում և որոշման 1-ին կետում «376.1 (երեք հարյուր յոթանասունվեց ամբողջ մեկ տասնորդական)» թիվը և բառերը փոխարինել «290.8 (երկու հարյուր իննսուն ամբողջ ութ տասնորդական)» թվով և բառերով,
   3) Վերնագրում, նախաբանում և որոշման 1-ին կետում «8.1 (ութ ամբողջ մեկ տասնորդական)» թիվը և բառերը փոխարինել «2.4 (երկու ամբողջ չորս տասնորդական)» թվով և բառերով,
   4) Որոշման 1-ին կետում «1123468 (մեկ միլիոն մեկ հարյուր քսաներեք հազար չորս հարյուր վաթսունութ)» թիվը և բառերը փոխարինել «844182 (ութ հարյուր քառասունչորս հազար մեկ հարյուր ութսուներկու)» թվով և բառերով,
   5) Նախաբանում «պարիսպ» բառից հետո լրացնել «իսկ 100.1 (մեկ հարյուր ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի շինությունները ինքնակամ կառուցված են 2022 թվականին» թվերը և բառերը,

6) Որոշման մեջ լրացնել նոր կետ հետևյալ խմբագրությամբ.

«6. Քաղաքացի Էդվարդ Արթուրի Բաղալյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկի փողոցի N 33/5 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 100.1 (մեկ հարյուր ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի շինությունները թողնել ինքնակամ»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«25» մարտի 2024 **թվականի** N 893-Ա

**«ՄՈՆԻԿԱ-ՌԱՖԱՅԵԼ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՀՐԱՉՅԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑԻ ՓՈՂՈՑ 181 ՀԱՍՑԵՈՒՄ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «Մոնիկա-Ռաֆայել» ՍՊԸ-ի տնօրեն Հրաչյա Մանուկյանի (ՀՎՀՀ՝ 05513189, գրանցման ամսաթիվը՝ 20.03.1997 թ.) 2024 թվականի մարտի 18-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի մարտի 18-ին 5191-2024 թվագրմամբ)՝

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.**

1. Թույլատրել «Մոնիկա-Ռաֆայել» ՍՊԸ-ի տնօրեն Հրաչյա Մանուկյանին Գյումրի քաղաքի Շիրակացի փողոց 181 հասցեում իրականացնել հեղուկ վառելիքի վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Մոնիկա-Ռաֆայել» ՍՊԸ-ի տնօրեն Հրաչյա Մանուկյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Недействительная подпись

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2024 թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«25» Մարտի 2024 **թվականի** N 892-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԼԱԼԱՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 545.6 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 162.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (130.44 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Լալայան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 545.6 (հինգ հարյուր քառասունհինգ ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 162.0 (հարյուր վաթսուներկու ամբողջ) քառակուսի մետր արտաքին (130.44 (հարյուր երեսուն ամբողջ քառասունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տուն:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի և <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված 2023QSKAME ծածկագրով մուտքագրման տեղեկանքը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Լալայան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 545.6 (հինգ հարյուր քառասունհինգ ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 162.0 (հարյուր վաթսուներկու ամբողջ) քառակուսի մետր արտաքին (130.44 (հարյուր երեսուն ամբողջ քառասունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացիներ Սևակ Հովհաննիսյանին, Կարապետ Հովհաննիսյանին և Ափդա Հովհաննիսյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

12.03.2024

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** X **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«25» ճեպտեմբերի 2024 **թվականի** N 891-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿՈՄԻՆՏԵՐՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 86.8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 173.6 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (135.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Կոմինտերն փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 86.8 (ութսունվեց ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 173.6 (հարյուր յոթանասուներեք ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր արտաքին (135.0 (հարյուր երեսունհինգ ամբողջ) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տուն:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի և <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված 2023WQNZPE ծածկագրով մուտքագրման տեղեկանքը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Կոմինտերն փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 86.8 (ութսունվեց ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 173.6 (հարյուր յոթանասուներեք ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր արտաքին (135.0 (հարյուր երեսունհինգ ամբողջ) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացիներ Շուշան Հանեսօղլյանին և Քրիստինե Հանեսօղլյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

12.09.2024

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** X **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» մարտի 2024 **թվականի** N 890-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 497.78 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 167.34 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (138.88 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 497.78 (չորս հարյուր իննսունյոթ ամբողջ յոթանասունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 167.34 (հարյուր վաթսունյոթ ամբողջ երեսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (138.88 (հարյուր երեսունութ ամբողջ ութսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տուն:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի և <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված 2023LDAXSS ծածկագրով մուտքագրման տեղեկանքը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 497.78 (չորս հարյուր իննսունյոթ ամբողջ յոթանասունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 167.34 (հարյուր վաթսունյոթ ամբողջ երեսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (138.88 (հարյուր երեսունութ ամբողջ ութսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Վոլոդյա Մարտիրոսյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

12.03.2024

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** X **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» հուլիսի 2024 **թվականի** N 889-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՎՈՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 156.12 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 156.12 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (123.38 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Սավոյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 156.12 (հարյուր հիսունվեց ամբողջ տասներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 156.12 (հարյուր հիսունվեց ամբողջ տասներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (123.38 (հարյուր քսաներեք ամբողջ երեսունութ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տուն:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի և <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված 2023VHCGJZ ծածկագրով մուտքագրման տեղեկանքը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Սավոյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 156.12 (հարյուր հիսունվեց ամբողջ տասներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 156.12 (հարյուր հիսունվեց ամբողջ տասներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (123.38 (հարյուր քսաներեք ամբողջ երեսունութ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացիներ Կարինե Խաչատրյանին, Մելինե Խաչատրյանին և Էդգար Խաչատրյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

12.03.2024

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

<<25>> Մարտի 2024 թվականի N 888-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԼԵՆԱ ՎԱՂԻՆԱԿԻ ՋԻԼԱՎՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Իր աշխատանքային պարտականությունները որակյալ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի խորհրդական Լենա Վաղինակի Ջիլավյանի նկատմամբ կիրառել խրախուսանք՝ միանվագ դրամական պարգևատրման տեսքով՝ մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով:
2. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ- գլխավոր ֆինանսիստին՝ վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լենա Վաղինակի Ջիլավյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

25.03.2024

X

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» Մարտի 2024 **թվականի** N 887-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԼԵՎՈՆ ՄԱԴՈՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 85/6 ՀԱՍՑԵԻ 187.6 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ, 158.28 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ, 80.54 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՏՈՒՇ ԱԼԲԵՐՏԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Լևոն Մադոյան փողոցի N 85/6 հասցեի 80.54 (ութսուն ամբողջ հիսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով ավտոտնակը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 15022024-08-0049 վկայական):

Հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի և հիմք ընդունելով Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 15-ի N 45-Ա որոշումը և քաղաքացի Արտուշ Ալբերտի Մարտիրոսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2021 թվականի հունվարի 22-ին N 1106 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Լևոն Մադոյան փողոցի N 85/6 հասցեի 187.6 (մեկ հարյուր ութսունյոթ ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր արտաքին, 158.28 (մեկ հարյուր հիսունութ ամբողջ քսանութ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով 393960 (երեք հարյուր իննսուներեք հազար ինը հարյուր վաթսուն) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով ավտոտնակն ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Արտուշ Ալբերտի Մարտիրոսյանին:
2. Գյումրի քաղաքի Լևոն Մադոյան փողոցի N 85/6 հասցեի 80.54 (ութսուն ամբողջ հիսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը գործող վաճառքի գներով՝ տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը կազմում է 2940 (երկու հազար ինը հարյուր քառասուն) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 236787 (երկու հարյուր երեսունվեց հազար յոթ հարյուր ութսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Արտուշ Ալբերտի Մարտիրոսյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո քաղաքացի Արտուշ Ալբերտի Մարտիրոսյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումներ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արտուշ Ալբերտի Մարտիրոսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
5. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Արտուշ Ալբերտի Մարտիրոսյանի միջոցների հաշվին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** X **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» Մարտի 2024 **թվականի** N 886-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի N 744-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի մարտի 12-ի «Քաղաքացի Գևորգ Ալբերտի Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Պ.Սևակ փողոց N 3/5 հասցեի տաղավարի զբաղեցրած 18,67 քառակուսի մետր մակերեսով վարձակալության տրամադրված հողամասի վարձակալության ժամկետը երկարաձգելու մասին» N 744-Ա որոշման (այսուհետ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումը.
   1) որոշման վերնագրում, նախաբանում և 1-ին, 3-րդ, 4-րդ կետերում «Գալստյանին» բառից հետո լրացնել «Կարինե Ռաֆայելի Հարությունյանին» բառերը:

22.03.2024

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** X **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

«22» Մարտի 2024 **թվականի** N 885-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-Ի N 778-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի մարտի 13-ի «Քաղաքացի Գևորգ Ալբերտի Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Պ.Սևակ փողոց N 3/6 հասցեի տաղավարի զբաղեցրած 18,67 քառակուսի մետր մակերեսով վարձակալության տրամադրված հողամասի վարձակալության ժամկետը երկարաձգելու մասին» N 778-Ա որոշման (այսուհետ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումը.
   1) որոշման վերնագրում, նախաբանում և 1-ին, 3-րդ, 4-րդ կետերում «Գալստյանին» բառից հետո լրացնել «Կարինե Ռաֆայելի Հարությունյանին» բառերը:

22.03.2024

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** X **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«22» Դեկտեմբերի 2024 **թվականի** N 884 Ա

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՎԱՍԻԼԻ ԵՎ ՍԱՇԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Կ.ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ 2-ՐԴ ՇԱՐՔ N 7 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 132.88 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1 ԻՆՔՆԱԿԱՄ ԴՌԱՆ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ ՊԱՏՈՒՀԱՆԸ, 1 ՄԵԿ ԻՆՔՆԱԿԱՄ ՓԱԿՎԱԾ ՊԱՏՈՒՀԱՆԸ, 1 ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾՔԻ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ ԴՈՒՌ ԵՎ ՊԱՏՈՒՀԱՆԸ, 1 ՄԵԿ ԻՆՔՆԱԿԱՄ ՓԱԿՎԱԾ ԴՈՒՌԸ, 1 ՄԵԿ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ ԴԱՐՊԱՍԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 166.86 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ 85.01 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացիներ Վասիլի և Սաշա Կարապետյաններին պատկանող (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրեր № 8022 և 8023 տրված 2023 թվականի նոյեմբերի 9-ին) Գյումրի քաղաքի Կ.Դեմիրճյան փողոց 1-ին նրբանցք 2-րդ շարք N 7 հասցեի բնակելի տան օրինական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված է 121.37 (մեկ հարյուր քսանմեկ ամբողջ երեսունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված է 13.66 (տասներեք ամբողջ վաթսունվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինություններ 1(մեկ) ինքնակամ դռան է ձևափոխված պատուհան, 1 (մեկ) ինքնակամ փակված է պատուհան, 1(մեկ) ինքնակամ բացվածքի է ձևափոխված դուռ և պատուհանը, 1(մեկ) ինքնակամ փակված է դուռ, 1 (մեկ) ինքնակամ բացված է դարպաս և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 166.86 (մեկ հարյուր վաթսունվեց ամբողջ ութսունվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս որի վրա առկա է 85.01(ութսունհինգ ամբողջ մեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություն:

Քաղաքացի Վասիլի և Սաշա Կարապետյանների լիազորված անձ Արմեն Խոցանյանը դիմել են Գյումրի համայնքի ղեկավարին նշված հողամասի և շինությունների նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով, 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 18-րդ կետի դ) ենթակետի, 22-րդ և 22.1-րդ կետի և հիմք ընդունելով Վասիլի և Սաշա Կարապետյաններին լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի դեկտեմբերի 12-ին N 27018 թվագրմամբ)՝ հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023GFCSWN և 202328SJU8 ծածկագրերը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացիներ Վասիլի և Սաշա Կարապետյանների սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Կ.Դեմիրճյան փողոց 1-ին նրբանցք 2-րդ շարք N 7 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից ավել օգտագործվող 166.86 (մեկ հարյուր վաթսունվեց ամբողջ ութսունվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և դրա վրա առկա 85.01(ութսունհինգ ամբողջ մեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություն նկատմամբ:
2. Քաղաքացիներ Վասիլի և Սաշա Կարապետյանների պատկանող Գյումրի քաղաքի Կ.Դեմիրճյան փողոց 1-ին նրբանցք 2-րդ շարք N 7 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 121.37 (մեկ հարյուր քսանմեկ ամբողջ երեսունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:
3. Քաղաքացիներ Վասիլի և Սաշա Կարապետյանների պատկանող Գյումրի քաղաքի Կ.Դեմիրճյան փողոց 1-ին նրբանցք 2-րդ շարք N 7 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 13.66 (տասներեք ամբողջ վաթսունվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինություններն 1(մեկ) ինքնակամ դռան ձևափոխված պատուհանը, 1 (մեկ) ինքնակամ փակված պատուհանը, 1 (մեկ) ինքնակամ բացվածքի ձևափոխված դուռ և պատուհանը, 1 (մեկ) ինքնակամ փակված դուռը, 1 (մեկ) ինքնակամ բացված դարպասը ճանաչել

օրինական, որպես օրինականացման վճար տեղական բյուջե ենթակա է գանձման 45532(քառասունհինգ հազար հինգ հարյուր երեսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ:

4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Վասիլի և Սաշա Կարապետյանների պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

21.03.2024

X **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«22» Մարտի 2024 **թվականի** N 883-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐՇԱԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԼԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ 8/1 ՀԱՍՑԵՈՒՄ ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արշակ Մանուկյանի (ՀՎՀՀ՝ 57274604, գրանցման ամսաթիվը՝ 25.06.2010 թ.) 2024 թվականի հունվարի 31-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի հունվարի 31-ին 1928-2024 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Արշակ Մանուկյանին Գյումրի քաղաքի Համլետ Սարգսյան փ. 8/1 հասցեում իրականացնել սեղմված բնական գազի վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Արշակ Մանուկյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

22.03.2024

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2024 թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«22» մարտի 2024 **թվականի** N 882-Ա

**«ԱՐՄԳԱԶ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՌՈՄԱՆ ՋԻՐՈՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ ՓՈՂՈՑ 42/1 ՀԱՍՑԵՈՒՄ ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «Արմգազ գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն Ռոման Ջիրոյանի (ՀՎՀՀ՝ 05550716, գրանցման ամսաթիվը՝ 04.09.2020 թ.) 2024 թվականի մարտի 19-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի մարտի 19-ին 5303-2024 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Թույլատրել «Արմգազ գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն Ռոման Ջիրոյանին Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկ փողոց 42/1 հասցեում իրականացնել սեղմված բնական գազի վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Արմգազ գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն Ռոման Ջիրոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

22.03.2024

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2024 թ. ք. Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

<<22>> մարտի 2024 թվականի N 881 -Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ-ԳԼԽԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԻՍՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀԱԿՈԲԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 163-րդ հոդվածով և հիմք ընդունելով Լևոն Հակոբի Բարսեղյանի 2024 թվականի մարտի 22-ի դիմումը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստի ժամանակավոր պաշտոնակատար Լևոն Հակոբի Բարսեղյանին տրամադրել 2024 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 2024 թվականի մարտի 25-ից:
**2.** Ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 7 աշխատանքային օր՝ 2024 թվականի մարտի 25-ից ապրիլի 2-ը ներառյալ:
**3.** Ամենամյա նվազագույն արձակուրդի ընթացքում Լևոն Հակոբի Բարսեղյանի ծառայողական պարտականությունների կատարումը վերապահել նույն բաժնի գլխավոր մասնագետ Ալվարդ Մայիսի Հակոբյանին:
**4.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լևոն Հակոբի Բարսեղյանին և Ալվարդ Մայիսի Հակոբյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

22.03.2024

X

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«22» Հունվարի 2024 **թվականի** N 880-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԲՈՒԼՎԱՐԱՅԻՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 312.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 110.02 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (87.5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Գյումրի քաղաքի Բուլվարային փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 312.0 (երեք հարյուր տասներկու ամբողջ) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 110.02 (մեկ հարյուր տասն ամբողջ երկու հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (87.5 (ութսունյոթ ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինություն:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի և «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023TNA3WW ծածկագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Գյումրի քաղաքի Բուլվարային փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 312.0 (երեք հարյուր տասներկու ամբողջ) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 110.02 (մեկ հարյուր տասն ամբողջ երկու հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (87.5 (ութսունյոթ ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունները համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի շինությունները և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Վաչագան Ֆրունզեի Վարոսյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

x [signature] **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«22» Տեպտ 2024 թվականի № 879-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Մ. ԳՈՐԿՈՒ ՓՈՂՈՑ, 102 ՀԱՍՑԵԻ ՇԵՆՔԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 40.02 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 74.61 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի մարտի 14-ի №787–Ա որոշումը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Մ. Գորկու փողոց, 102 հասցեի շենքի հարևանությամբ գտնվող 40.02 քառակուսի մետր մակերեսով հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 74.61 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինությանը տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Մ. Գորկու փողոց, 102/8 շինություն**

Недействительная подпись
X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**Ո Ր Ո Շ Ու Մ**

« 22 » **մարտի 2024 թվականի N** 878-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ելնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի բյուջեի միջոցների նպատակային օգտագործման անհրաժեշտությունից, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 2024 թվականի հունվարի 23-ի N 3-Ն որոշման 2-րդ կետով՝

**Ո Ր Ո Շ Ու Մ ԵՄ.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի NN 3,4 հատվածներում կատարել վերաբաշխումներ՝ համաձայն NN 1,2 հավելվածների:

2.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված վերաբաշխումները կատարել օրենքով սահմանված կարգով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Недействительная подпись

X

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք. Գյումրի**

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թ.-ի
մարտի -ի N ___ որոշման

## ՀԱՏՎԱԾ 3

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

(հազար դրամներով)

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների | | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում | | Ըստ եռամսյակների | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական մաս | ֆոնդային մաս | 1-ին | 2-րդ | 3-րդ | 4-րդ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 4411 | -Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին | 4511 | 0.0 | 0.0 | 0.0 | -8,400.0 | -8,200.0 | 0.0 | 0.0 |
| 4712 | -Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին | 4819 | 0.0 | 0.0 | 0.0 | 8,400.0 | 8,200.0 | 0.0 | 0.0 |

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թ.-ի
մարտի -ի N ___ որոշման

## ՀԱՏՎԱԾ 4

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | հոդված | Ընդամենը (ս.7+ս.8) | այդ թվում՝ վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | Ըստ եռամսյակների 1-ին | 2-րդ | 3-րդ | 4-րդ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | | 6 | 7 | 8 | 7 | 8 | 9 | 10 |
| 2800 | 08 | 0 | 0 | ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ (տող2810+տող2820+տող2830+տող2840+տող2850+տող2860) | | 0.0 | 0.0 | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2810 | 08 | 1 | 0 | Հանգստի և սպորտի ծառայություններ | | 0.0 | 0.0 | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2811 | 08 | 1 | 1 | Հանգստի և սպորտի ծառայություններ | | 0.0 | 0.0 | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | Սուբսիդիաներ ոչ ֆինանս. համայնքային կազմակ. | 4511 | 0.0 | 0.0 | | -8,000.0 | -8,000.0 | | |
| | | | | Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին | 4819 | 0.0 | 0.0 | | 8,000.0 | 8,000.0 | | |
| 2820 | 08 | 2 | 0 | Մշակութային ծառայություններ | | 0.0 | 0.0 | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2821 | 08 | 2 | 1 | Գրադարաններ | | 0.0 | 0.0 | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | Սուբսիդիաներ ոչֆինանսական համայնքային կազմակ. | 4511 | 0.0 | 0.0 | | -400.0 | -200.0 | | |
| | | | | Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին | 4819 | 0.0 | 0.0 | | 400.0 | 200.0 | | |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

<<21>> մարտի 2024 թվականի N 877-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ՅՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼՅՈՎԱ ՍԼԱՎԻԿԻ ՀԱՇԱՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ հաստատված ցանկի 1-ին կետով և հիմք ընդունելով Լյովա Սլավիկի Հաշարյանի 2024 թվականի մարտի 19-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Յուրի Վարդանյանի անվան ծանրամարտի մանկապատանեկան մարզադպրոց >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Լյովա Սլավիկի Հաշարյանին տրամադրել 2024 թվականի աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդը՝ 2024 թվականի մարտի 27-ից:

**2.** Ամենամյա երկարացված արձակուրդը՝ 30 աշխատանքային օր՝ 2024 թվականի մարտի 27-ից մայիսի 2-ը ներառյալ:

**3.** Ամենամյա երկարացված արձակուրդի ընթացքում Լյովա Սլավիկի Հաշարյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության ուսմասվար Արևիկ Մանվելի Միրզախանյանին:

**4.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լյովա Սլավիկի Հաշարյանին և Արևիկ Մանվելի Միրզախանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

21.03.2024

x

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


**ՈՐՈՇՈՒՄ**

**«21» մարտի 2024 թվականի N 876-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 06-Ի N 336-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի փետրվարի 06-ի N 336-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրական նյութերում տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 20/02/2024 թվականի N Կ-20022024-08-0131 որոշում) : Ներկայացվել է նոր ճշտգրված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի փետրվարի 06-ի <<Քաղաքացի Վարդան Մկրտիչի Եղիազարյանին պատկանող Գյումրի քաղաքի Մանտիշյան փողոց N 275 հասցեի հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 63,9 քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունները և ինքնակամ փակած 1 (մեկ) պատուհանը օրինական ճանաչելու մասին>> N 366-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝
   1) վերնագրում, նախաբանում և որոշման 1-ին կետում <<63,9 (վաթսուներեք ամբողջ ինը տասնորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<61,38(վաթսունմեկ ամբողջ երեսունութ հարյուրերրորդական) >> թվով ու բառերով.
   2) վերնագրում, նախաբանում, որոշման 2-րդ կետում <<պատուհանը>> բառից հետո լրացնել <<և ինքնակամ փակված 1(մեկ) դուռը>> թիվը և բառերը.
   3) որոշման 2-րդ կետում << 2725(երկու հազար յոթ հարյուր քսանհինգ)>> թիվը և բառերը փոխարինել <<5450(հինգ հազար չորս հարյուր հիսուն)>> թվով և բառերով:

21.03.2024

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** x **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**2024 թ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«21» Տարր 2024 թվականի № 875-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27–Ի №612-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 24-րդկետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33–րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի փետրվարի 27–ի «Գյումրի քաղաքի Բուլվարային փողոցի հարեվանությամբ գտնվող 33292,28 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0213-0008, 08-001-0213-0020) համայնքի գույք գրանցելու նպատակով հասցե տրամադրելու մասին» №612-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. վերնագրում և որոշման կայացման մեջ «33292,28» թիվը փոխարինել «26465.36» թվով,
2. վերնագրում և որոշման կայացման մեջ
«կադաստրային ծածկագիր 08-001-0213-0008, 08-001-0213-0020» բառերը և թվերը փոխարինել «կադաստրային ծածկագիր 08-001-0213-0008» բառերով և թվերով:

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ X Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«21» մայիսի 2024 **թվականի** N 874-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 05-Ի N 298-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի փետրվարի 05-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Աթարբեկյան փողոց 122ա հասցեի հարեվանությամբ ինքնակամ զբաղեցրած 252.23 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 132.95 քառակուսի մետր արտաքին (109.61 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունները համայնքային սեփականություն համարելու եվ օրինական ճանաչելու մասին>> № 298-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 19/03/2024 թվականի N Կ-19032024-08-0066 որոշում):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի փետրվարի 05-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Աթարբեկյան փողոց 122ա հասցեի հարեվանությամբ ինքնակամ զբաղեցրած 252.23 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 132.95 քառակուսի մետր արտաքին (109.61 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունները համայնքային սեփականություն համարելու եվ օրինական ճանաչելու մասին>> № 298-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) Վերնագրում, նախաբանում, որոշման 1-ին կետում «132.95 (մեկ հարյուր երեսուներկու ամբողջ իննսունհինգ հարյուրերորդական)» թիվը և բառերը փոխարինել «137.92(մեկ հարյուր երեսունյոթ ամբողջ իննսուներկու հարյուրերորդական)» թվով և բառերով:

x

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

**«21» Մարտի 2024 թվականի N 873-Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԳԱԾ 7-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ N7/1 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ 727.9 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 23.78ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (20.65 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԼՈՂԱՎԱԶԱՆԸ ԵՎ ՊԱՐԻՍՊԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Արագած 7-րդ թաղամաս N7/1 հասցեի հողամասին կից, 727.9(յոթ հարյուր քսանյոթ ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված են 23.78(քսաներեք ամբողջ յոթանասունութ հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (20.65(քսան ամբողջ վաթսունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով լողավազան և պարիսպ որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Արման Շաբոյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023YXHJSM ծածկագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Գյումրի քաղաքի Արագած 7-րդ թաղամաս N7/1 հասցեի հողամասին կից, 727.9(յոթ հարյուր քսանյոթ ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 23.78(քսաներեք ամբողջ յոթանասունութ հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (20.65(քսան ամբողջ վաթսունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով լողավազանը և պարիսպը համարել համայնքի սեփականություն և ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Արման Շաբոյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

19.03.2024

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** X **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«21» Տեպրվ 2024 թվականի N 872-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՐՄԱՆ ՄԱՐՏՈՒՆԻԿԻ ՇԱԲՈՅԱՆԻՆ ԵՎ ՄԱՆԵ ՍԱՄՎԵԼԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԳԱԾԻ 7-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ N7/1 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 434.26 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (323.99 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացիներ Արման Մարտունիկի Շաբոյանին և Մանե Սամվելի Վարդանյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Արագածի 7-րդ թաղամաս N7/1 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված է 434.26 (չորս հարյուր երեսունչորս ամբողջ քսանվեց հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (323.99 (երեք հարյուր քսաներեք ամբողջ իննսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տուն:

Քաղաքացի Արման Մարտունիկի Շաբոյանը դիմել է նշված շինությունն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հաշվի առնելով որ կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023MEQLDK ծածկագիրը և քաղաքացի Արման Մարտունիկի Շաբոյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականին N27165 թվագրմամբ)՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացիներ Արման Մարտունիկի Շաբոյանին և Մանե Սամվելի Վարդանյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Արագածի 7-րդ թաղամաս N7/1 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 434.26 (չորս հարյուր երեսունչորս ամբողջ քսանվեց հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (323.99 (երեք հարյուր քսաներեք ամբողջ իննսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 726517 (յոթ հարյուր քսանվեց հազար հինգ հարյուր տասնյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Օրինականացման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 60 օրյա ժամկետում չվճարման դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում իրականացնել օրենքով սահմանված կարգով:

20.03.2024

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«21» Մարտի 2024 թվականի N 871-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑ N8 ՀԱՍՑԵԻ 318.63 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԱՌԿԱ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ 531.7 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՒԲԻԿ ՌԱՖԻԿԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Կ. Խաչատրյան փողոց N8 հասցեում, մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, 531.7 (հինգ հարյուր երեսունմեկ ամբողջ յոթ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում կառուցվել է 318.63 (երեք հարյուր տասնութ ամբողջ վաթսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի տուն, որի նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, հողհատկացման հիմքերը ու այն փաստացի տիրապետում և օգտագործում է քաղաքացի Ռուբիկ Ռաֆիկի Բարսեղյանը:

Քաղաքացի Ռուբիկ Ռաֆիկի Բարսեղյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին հողամասի և բնակելի տան նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով, որ շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածով, հիմք ընդունելով քաղաքացի Ռուբիկ Ռաֆիկի Բարսեղյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի N 1300 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացի Ռուբիկ Ռաֆիկի Բարսեղյանի (ծնված 1952 թվականի հուլիսի 12-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Կ. Խաչատրյան փողոց N8 հասցեի 400.0 (չորս հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա 318.63 (երեք հարյուր տասնութ ամբողջ վաթսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տան նկատմամբ:
2. Գյումրի քաղաքի Կ. Խաչատրյան փողոց N8 հասցեին կից, սահմանված չափից ավել օգտագործվող 131.7 ( հարյուր երեսունմեկ ամբողջ յոթ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Ռուբիկ Ռաֆիկի Բարսեղյանին՝ տվյալ հողամասի կադաստրային գնով, որը կազմում է 6834 /վեց հազար ութ հարյուր երեսունչորս/ Հայաստանի Հանրապետության դրամ 1 /մեկ/ քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 900038 /ինը հարյուր հազար երեսունութ/ Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սահմանված կարգով կնքել ավել օգտագործվող 131.7 ( հարյուր երեսունմեկ ամբողջ յոթ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ռուբիկ Ռաֆիկի Բարսեղյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից :

20.03.2024

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ X Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«21» Հունիսի 2024 թվականի N 870-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԵՑԽՈՎԵԼՈՒ ՓՈՂՈՑ N16 ՏԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ 34.24 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 34.24 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (26.45 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՄԱՌԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Կեցխովելու փողոց N16 տան հարևանությամբ, 34.34(երեսունչորս ամբողջ երեսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված են 34.34(երեսունչորս ամբողջ երեսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (26.45(քսանվեց ամբողջ քառասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակ և մառան որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Հովհաննես Աջապահյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023MYWQGG ծածկագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Գյումրի քաղաքի Կեցխովելու փողոց N16 տան հարևանությամբ, 34.34(երեսունչորս ամբողջ երեսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 34.34(երեսունչորս ամբողջ երեսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (26.45(քսանվեց ամբողջ քառասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակը և մառանը համարել համայնքի սեփականություն և ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Հովհաննես Աջապահյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

19.03.2024

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** X [signature] **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

«_21_» _Մարտի_ **2024 թվականի N** _869_**-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23-Ի N 536-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի N 2999-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 29-ի N 2999-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրության մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 04/03/2024 թվականի N Կ-04032024-08-0120 որոշում): Ներկայացվել է նոր ճշտգրտված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 29-ի <<Քաղաքացի Վարդուհի Արզունիկի Ալեքսանյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Դեկաբրիստների փողոցի N 5 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 129,57 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններն օրինական ճանաչելու մասին>> N 2999-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) վերնագրում, նախաբանում, որոշման 1-ին կետում <<129,57(մեկ հարյուր քսանինն ամբողջ հիսունյոթ հարյուրերրորդական>> թիվը և բառերը փոխարինել <<99,8(իննսունինն ամբողջ ութ տասնորդական)>> թվով և բառերով.
   2) որոշման 3-րդ կետում <<Հարություն Հմայակի Նիկողոսյանին և Էմմա Հրաչյայի Սահակյանին>> բառերը փոխարինել <<Վարդուհի Արզունիկի Ալեքսանյանին>> բառերը:

2. Գյումրի համայնքի ղեկավարի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 29-ի N 2999-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> 2024 թվականի փետրվարի 23-ի N 536-Ա որոշումը ճանաչել ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ X ________ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

**ք.Գյումրի**
**2024 թ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» մարտի 2024 **թվականի** N 868-Ա

**<<ԷՅԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով <<Էյթիէլ սերվիսիս>> ՍՊԸ-ի 2024 թվականի մարտի 19-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի մարտի 20-ին 5325 թվագրմամբ)՝

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ.**

1. Թույլատրել <<Էյթիէլ սերվիսիս>> ՍՊԸ-ին Գյումրի քաղաքի վարչական տարածքում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (պաստառ) ընդհանուր 54 քմ մակերեսով՝ համաձայն հավելվածի:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2024 թվականի մարտի 25- ից մինչև 2024 թվականի օգոստոսի 24-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Էյթիէլ սերվիսիս>> ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Կարապետյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՂԵԿԱՎԱՐ՝ ______ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2024թ. ք. Գյումրի**

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Շիրակի մարզի Գյումրի համայնքի

Ղեկավարի 2024 թ.

N 868-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

<<ԷՅԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ>> ՍՊԸ-Ի ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ (ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ) ՀԱՍՑԵՆԵՐԻ

| Հ/Հ | ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿ | Քանակ | (քառ. մ) |
|---|---|---|---|
| 1 | Մ. Խորենացի, Սախարովի հրապարակ | 1 | 18 |
| 2 | Պռոշյան և Գ. Նժդեհ փողոցների խաչմերուկ | 1 | 18 |
| 3 | Տերյան և Մյասնիկյան փողոցների խաչմերուկ | 1 | 18 |
| | **Ընդամենը** | 3 | 54 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«21» Մայիսի 2024 թվականի № 867-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՇՈՏ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 320,29 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԱՌԿԱ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ 879,46 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի մարտի 13-ի №781–Ա որոշումը, չափագրման արտոնագիր ունեցող «Ս ՖՈՌՄԱՏ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հողամասի հատակագիծը ու քաղաքացի Աշոտ Ղազարյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №5100 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաքի Վ. Սարգսյան փողոցի հարևանությամբ քաղաքացի Աշոտ Ղազարյանին պատկանող 320,29 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությանը և դրա կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված 879,46 քառակուսի մետր մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Վ. Սարգսյան 1-ին թաղամաս, 104/6 բնակելի տուն**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ x Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«21» մայիսի 2024 թվականի № 866-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԼԻՍԻՆՅԱՆ ՓՈՂՈՑ, 1Ա ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ № 432274) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Անահիտ Աբրահամյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №4999 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Լիսինյան փողոց, 1ա բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական № 432274) վերահասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Լ. Լիսինյան փողոց, 10/6 բնակելի տուն**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ X Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«21» մայիսի 2024 թվականի № 865-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂՈՒ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 31.68 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-1125-0004) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի Երևանյան խճուղու հարևանությամբ գտնվող 31.68 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-1125-0004) տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Երևանյան խճուղի, 19/8 հողամաս**

Недействительная подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«21» Ճհեպրիլ 2024 թվականի № 864-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի №808–Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՀՐԱՉ ԵՎ ՄԱՐԻ ՍԱՐԳՍՅԱՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 120,64 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ 332,34 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0676-0031) ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով չափագրման արտոնագիր ունեցող «Ս ՖՈՌՄԱՏ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հողամասի հատակագիծը ու քաղաքացի Հրաչ Սարգսյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №5203 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի մարտի 18-ի №808–Ա որոշմամբ սեփականության իրավունքով քաղաքացիներ Հրաչ և Մարի Սարգսյաններին պատկանող 120,64 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տանը և դրա կառուցման ու սպասարկման համար փաստացի զբաղեցրած 332,34 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0676-0031) տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Հ. Սարգսյան փողոց, 46/2 բնակելի տուն**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«21» Մարտի 2024 թվականի № 863-Ա

**ՊԱՅԾԱՌ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Ա. ՕԶԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ, 13/1 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Պայծառ Մարգարյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №5204 թվագրմամբ), Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի մարտի 12-ի №741-Ա որոշումը, չափագրման արտոնագիր ունեցող «Մ ՖՈՌՄԱՏ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հողամասի, շինության բաժանման սխեմաները և հատակագծերը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Պայծառ Մարգարյանին պատկանող Գյումրի քաղաք, Ա. Օզանյան փողոց, 1-ին փակուղի, 13/1 բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը երկու մասերի բաժանելու նպատակով տրամադրել հասցեներ.

1. 70.20 քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունը հասցեավորել՝ **ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Օզանյան փողոց, 1-ին փակուղի, 13/1 բնակելի տուն**
2. 62.66 քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունը հասցեավորել՝ **ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Օզանյան փողոց, 1-ին փակուղի, 13/2 բնակելի տուն**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ X Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«21» ծարտի 2024 թվականի № 862-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՄՈՑԱՐՏԻ ՓՈՂՈՑ, 24 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0090-0012) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Էդգար Կարապետյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №5015 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Արսեն Նուրիջանյան» ԱՁ-ի կողմից տրամադրված հողամասի բաժանման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաք, Մոցարտի փողոց, 24 բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը (կադաստրային ծածկագիր 08-001-0090-0012) երկու մասերի բաժանելու նպատակով տրամադրել հասցեներ.

1. 281.19 քառակուսի մետր մակերեսով հողամասը հասցեավորել՝
   **ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Մոցարտի փողոց, 24 բնակելի տուն**
2. 240.24 քառակուսի մետր մակերեսով հողամասը հասցեավորել՝
   **ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Մոցարտի փողոց, 24/2 բնակելի տուն**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ x Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**« 21» մարտի 2024 թվականի N 861 -Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-Ի N 861-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներով՝

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2016 թվականի մայիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների էթիկայի հանձնաժողով ձևավորելու մասին» N 861-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հավելվածում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Недействительная подпись

X

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**ք. Գյումրի, 2024 թվական**

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ղեկավարի
2024 թվականի մարտի 21-ի
N 861-Ա որոշման

«Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ղեկավարի
2016 թվականի մայիսի 24-ի
N 861-Ա որոշման»

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Լուսինե Սանոյան — Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

Հանձնաժողովի քարտուղար՝

Սյուզաննա Վարդանյան — Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ

Հանձնաժողովի անդամներ՝

Հայկ Սուլթանյան — Գյումրի համայնքի ղեկավարի գլխավոր խորհրդական

Լենա Ջիլավյան — Գյումրի համայնքի ղեկավարի խորհրդական

Շողիկ Ալեքսանյան — Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի կրթության բաժնի պետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«21» մարտի 2024 **թվականի** N 860-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՕԶԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ N 3 ՀԱՍՑԵԻ 2392,5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Օզանյան փողոց 3 հասցեի 2392,5 (երկու հազար երեք հարյուր իննսուներկու ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառնված Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի N 124-Ա որոշմամբ հաստատված Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծի հեռանկարային զարգացման գծագրով հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամաս:
Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխել նշված հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Օզանյան փողոց 3 հասցեի 2392,5 (երկու հազար երեք հարյուր իննսուներկու ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատում գործառնական նշանակության:

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** X **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

«20» Մարտի 2024 թվականի N 859 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ի N 2397-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 22-Ի N 1267-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվական մայիսի 22-ի N 1267-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրության մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 16/10/2023 թվականի N Կ-16102023-08-0129 որոշում): Ներկայացվել է նոր ճշտգրտված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 22-ի <<Քաղաքացի Հովհաննես Գերասիմի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Արմենյան փողոց N 3 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 48,08 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինությունները օրինական ճանաչելու մասին>> N 1267-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝
   1) վերնագրում, նախաբանում և որոշման 1-ին կետում <<շինությունը>> բառից հետո լրացնել <<ինքնակամ ձևափոխված 1 (մեկ) դուռը>>, <<ինքնակամ փակված 1(մեկ) դարպասը>> թվերը և բառերը.
   2) նախաբանում <<22 կետի>> թիվից և բառից հետո լրացնել <<18-րդ կետի դ) ենթակետի>> թիվը և բառերը.
   3) որոշման 1-ին կետում <<94670(իննսունչորս հազար վեց հարյուր յոթանասուն)>> թիվը և բառերը փոխարինել <<98608(իննսունութ հազար վեց հարյուր ութ)>> թվով և բառերով.
   4) նախաբանում <<2023GO2KTU>> թիվը և տառերը փոխարինել <<2022GO2KTU>> թվով և տառերով:
2. Գյումրի համայնքի ղեկավարի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 22-ի N 1267-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> 2023 թվականի սեպտեմբերի 27-ի N 2397-Ա որոշումը ճանաչել ուժը կորցրած:

20.03.2024

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«19» Մարտի 2024 **թվականի** N 858-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՒՍՏԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿՈՄԻՏԱՍԻ ՓՈՂՈՑ N 28 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 72.43 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 33.32 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ 0.18 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Ռուստամ Սպարտակի Հարությունյանին պատկանող (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր № 949 տրված 14.12.2023թ.) Գյումրի քաղաքի Կոմիտասի փողոց N 28 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված են 72.43(յոթանասուներկու ամբողջ քառասուներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ և օրինական հողամասին կից ավել օգտագործում է 33.32(երեսուներեք ամբողջ երեսուներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս, որի վրա առկա 0.18(զրո ամբողջ տասնութ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

Քաղաքացի Ռուստամ Սպարտակի Հարությունյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի և շինությունների նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով, 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով քաղաքացի Արմեն Վոլոդյայի Մխիթարյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի փետրվարի 13-ին N 2802 թվագրմամբ՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացի Ռուստամ Սպարտակի Հարությունյանի (ծնված 1973 թվականի նոյեմբերի 08-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Կոմիտասի փողոց N 28 հասցեի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 33.32(երեսուներեք ամբողջ երեսուներկու հարյուրերրորդական)) քառակուսի մետր մակերեսով հողամասի, և դրա վրա առկա 0.18(զրո ամբողջ տասնութ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունների նկատմամբ:
2. Քաղաքացի Ռուստամ Սպարտակի Հարությունյանին պատկանող Գյումրի քաղաքի Կոմիտասի փողոց N 28 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 72.43(յոթանասուներկու ամբողջ քառասուներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

19.03.2024

X

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«19» մարտի 2024 **թվականի** N857-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ԿԱՐԱՊԵՏ ԴԱՆԻԵԼԻ ԲՈԳԱՑՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԼԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ 3-ՐԴ ԱՆՑՈՒՄԻ N 2 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 52.04 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ՓԱԿՎԱԾ 2 ԲԱՑՎԱԾՔՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 172.21 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Կարապետ Դանիելի Բոգացյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Համլետ Սարգսյան փողոցի 3-րդ անցումի N 2 հասցեի բնակելի տան օրինական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված է 52.04 (հիսուներկու ամբողջ չորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, ինքնակամ փակված է 2 (երկու) բացվածք, որոնք հաշվառված են Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում N 2023GJFVLK ծածկագրով և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 172.21 (մեկ հարյուր յոթանասուներկու ամբողջ քսանմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված հողամաս, որի վրա առկա շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

Քաղաքացի Կարապետ Դանիելի Բոգացյանի կողմից լիազորված անձ Արմեն Խոցանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված հողամասի և շինությունների նկատմամբ Կարապետ Դանիելի Բոգացյանի սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով, 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1-րդ կետի, 8.1 կետի, 18-րդ կետի դ ենթակետի և հիմք ընդունելով քաղաքացի Կարապետ Դանիելի Բոգացյանի կողմից լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի հունվարի 18-ին N 994 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Կարապետ Դանիելի Բոգացյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Համլետ Սարգսյան փողոցի 3-րդ անցումի N 2 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 52.04 (հիսուներկու ամբողջ չորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները, ինքնակամ փակված 2 (երկու) բացվածքը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 5450 (հինգ հազար չորս հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ
2. Ճանաչել քաղաքացի Կարապետ Դանիելի Բոգացյանի (ծնված 1967 թվականի սեպտեմբերի 24-ին) սեփականության իրավունքը՝ ժառանգության իրավունքով իրեն պատկանող, Գյումրի քաղաքի Համլետ Սարգսյան փողոցի 3-րդ անցումի N 2 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից, ավել օգտագործվող 172.21 (մեկ հարյուր յոթանասուներկու ամբողջ քսանմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված հողամասի և նրա վրա առկա շինությունների նկատմամբ:

3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Կարապետ Դանիելի Բոզացյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«19» ապրիլի 2024 **թվականի** N 856-Ա

## ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՍԻ ԿՈՄԲԻՆԱՏ ԹԱՂԱՄԱՍԻ N 25 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԵՆ ՇԱՀՎԱԼԱԴԻ ԽԱՆԴՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ 98.79 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ 159.56 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Մսի կոմբինատ թաղամասի N 25 հասցեի համայնքապատկան հողամասում, մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցվել է բնակելի շինություն, որի նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, հողհատկացման հիմքերը և այն փաստացի տիրապետում և օգտագործում է քաղաքացի Արմեն Շահվալադի Խանդոյանը:

Քաղաքացի Արմեն Շահվալադի Խանդոյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին հողամասի և բնակելի շինության նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով, որ շինությունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով և հիմք ընդունելով քաղաքացի Արմեն Շահվալադի Խանդոյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի նոյեմբերի 21-ին N 24942 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացի Արմեն Շահվալադի Խանդոյանի (ծնված 1974 թվականի հոկտեմբերի 13-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Մսի կոմբինատ թաղամասի N 25 հասցեում գտնվող 159.56 (մեկ հարյուր հիսունինն ամբողջ հիսունվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա 98.79 (իննսունութ ամբողջ յոթանասունինը հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինության նկատմամբ:
2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արմեն Շահվալադի Խանդոյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

29.03.2024

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**ՈՐՈՇՈՒՄ**

**«19» Մարտի 2024 թվականի N 855-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 06-Ի N 2778-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 06-ի N 2778-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրության մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի 07/02/2024 թվականի N Կ-07022024-08-0250) ։ Ներկայացվել է նոր ճշտգրտված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 06-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Լալայան փողոցի հարևանությամբ 413,19 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 413,46 քառակուսի մետր արտաքին (272,57 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունները համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին>> N 2778-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները ՝

1) վերնագրում, նախաբանում, որոշման 1-ին կետում <<413,46 (չորս հարյուր տասներեք ամբողջ քառասունվեց հարյուրերորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<314,03(երեք հարյուր տասնչորս ամբողջ երեք հարյուրերորդական)>> թվով և բառերով, <<272,57 (երկու հարյուր յոթանասուներկու ամբողջ հիսունյոթ հարյուրերորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<276,43 (երկու հարյուր յոթանասունվեց ամբողջ քառասուներեք հարյուրերորդական)>> թվով և բառերով.

2) նախաբանում <<2023KQYF7C>> ծածկագիրը փոխարինել <<2023T759BH>> ծածկագրով ։

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝** X **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**2024 թ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**ՈՐՈՇՈՒՄ**

**«19» Մարտի 2024 թվականի N 854-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 05-Ի N 677-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 3293-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 3293-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրական նյութերում տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 11/03/2024 թվականի N Կ-11032024-08-0215 որոշում): Ներկայացվել է նոր ճշտգրված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 26-ի <<Քաղաքացի Մարիա Անդրանիկի Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Չերազի փողոցի 1-ին նրբանցքի N 38 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 39,21 քառակուսի մետր մակերեսով բնակելի շինությունները, ինքնակամ բացված 3 պատուհան, 2 դուռը և ինքնակամ փակված 1 դուռն օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 16,7 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 3293-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) վերնագրում, նախաբանում, որոշման 1-ին կետում <<16,7(տասնվեց ամբողջ յոթ տասնորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<15,95(տասնհինգ ամբողջ իննսունհինգ հարյուրերորդական)>> թվով և բառերով:

2. Գյումրի համայնքի ղեկավարի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 3293-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> 2024 թվականի մարտի 05-ի N 677-Ա որոշումը ճանաչել ուժը կորցրած:

19.03.2024

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**2024 թ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«19» [illegible] 2024 **թվականի** N 853-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՐԳԻՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՂՅՈՒՍԻ ՓՈՂՈՑ N 47 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 85.47 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (68.55 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 11.63 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԵԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Սարգիս Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 12082015-08-0013) Գյումրի քաղաքի Աղյուսի փողոց N 47 հասցեի հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված է 85.47(ութսունհինգ ամբողջ քառասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինություն և օրինական հողամասին կից ավել օգտագործում է 11.63 քառակուսի մետր մակերեսով հողամաս:

Քաղաքացի Սարգիս Խաչատրյանի լիազորված անձ Ազգանուշ Խաչատրյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ բնակելի շինություններն օրինականացնելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60- րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22 կետով, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով, 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով հիմք ընդունելով քաղաքացի Սարգիս Խաչատրյանի լիազորված անձ Ազգանուշ Խաչատրյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի օգոստոսի 30-ին N 18247 թվագրմամբ ) հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023KFLY9J ծածկագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Սարգիս Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Աղյուսի փողոց N 47 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 85.47(ութսունհինգ ամբողջ քառասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 142299(մեկ հարյուր քառասուներկու հազար երկու հարյուր իննսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Ճանաչել քաղաքացի Սարգիս Խաչատրյանի (ծնված 1959 թվականի հոկտեմբերի 2-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Աղյուսի փողոց N 47 հասցեի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 11.63 (տասնմեկ ամբողջ վաթսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս նկատմամբ:
3. Որոշումը կայանալու պահից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում, որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Սարգիս Խաչատրյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից::
5. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

07.03.2024

x

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# Ո Ր Ո Շ Ու Մ

«19» մարտի 2024 **թվականի** N 852-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՒԶԱՆ ՍԱՐԳՍԻ ԿՈՒՐՂԻՆՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱԿՈԲՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 122, 124 ՀԱՍՑԵՆԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 4.87 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ՓԱԿՎԱԾ 1 ՊԱՏՈՒՀԱՆԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 1 ԴՈՒՌԸ, 2 ՊԱՏՈՒՀԱՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 26.78 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Ռուզան Սարգսի Կուրղինյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Հակոբյան փողոցի N 122, 124 հասցեների բնակելի տան օրինական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված է 4.87 (չորս ամբողջ ութսունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, ինքնակամ փակված է 1 (մեկ) պատուհան, ինքնակամ բացված է 1 (մեկ) դուռ, 2 (երկու) պատուհան, որոնք հաշվառված են Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում N 2023JP5YJ2 ծածկագրով և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 26.78 (քսանվեց ամբողջ յոթանասունութ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված հողամաս, որի վրա առկա շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

Քաղաքացի Ռուզան Սարգսի Կուրղինյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված հողամասի և շինությունների նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով, 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1-րդ կետի, 8.1 կետի, 18-րդ կետի դ ենթակետի և հիմք ընդունելով քաղաքացի Ռուզան Սարգսի Կուրղինյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի սեպտեմբերի 14-ին N 19464 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Ռուզան Սարգսի Կուրղինյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Հակոբյան փողոցի N 122, 124 հասցեների բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 4.87 (չորս ամբողջ ութսունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները, ինքնակամ փակված 1 (մեկ) պատուհանը, ինքնակամ բացված 1 (մեկ) դուռը, 2 (երկու) պատուհանը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 12824 (տասներկու հազար ութ հարյուր քսանչորս) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Ճանաչել քաղաքացի Ռուզան Սարգսի Կուրղինյանի (ծնված 1992 թվականի հոկտեմբերի 06-ին) սեփականության իրավունքը՝ ժառանգության իրավունքով իրեն պատկանող, Գյումրի քաղաքի Հակոբյան փողոցի N 122, 124 հասցեների բնակելի տան օրինական հողամասին կից, ավել օգտագործվող 26.78 (քսանվեց ամբողջ յոթանասունութ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված հողամասի և նրա վրա առկա շինությունների նկատմամբ:
3. Ճանաչել քաղաքացի Ռուզան Սարգսի Կուրղինյանի (ծնված 1992 թվականի հոկտեմբերի 06-ին) և ընդհանուր բակում առկա մյուս տնատիրությունների ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Հակոբյան փողոցի N 122, 124 հասցեների բնակելի տան օրինական հողամասին կից, ավել օգտագործվող 69.17 (վաթսունինն ամբողջ տասնյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված հողամասի և նրա վրա առկա 3.77 (երեք ամբողջ յոթանասունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով պարսպի նկատմամբ:
4. Օրինականացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60 օրվա ընթացքում չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ռուզան Սարգսի Կուրղինյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

19.03.2024

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** X **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«19» Մարտի 2024 **թվականի** N 851-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ՋԱՎԱՀԻՐ ԱՐԱՄԻ ԽԼՂԱԹՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՋԱՓԱՐԻՁԵԻ ՓՈՂՈՑԻ N 49 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 128.57 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 13.47 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Ջավահիր Արամի Խլղաթյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ջափարիձեի փողոցի N 49 հասցեի բնակելի տան օրինական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված է 128.57 (մեկ հարյուր քսանութ ամբողջ հիսունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, որոնք հաշվառված են Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում N 2023L2KRQP ծածկագրով և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 13.47 (տասներեք ամբողջ քառասունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված հողամաս, որի վրա առկա շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

Քաղաքացի Ջավահիր Արամի Խլղաթյանի կողմից լիազորված անձ Արամ Խլղաթյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված հողամասի և շինությունների նկատմամբ Ջավահիր Արամի Խլղաթյանի սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով, 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1-րդ կետի և հիմք ընդունելով քաղաքացի Ջավահիր Արամի Խլղաթյանի կողմից լիազորված անձ Արամ Խլղաթյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի նոյեմբերի 28-ին N 25630 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Ջավահիր Արամի Խլղաթյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ջափարիձեի փողոցի N 49 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 128.57 (մեկ հարյուր քսանութ ամբողջ հիսունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:
2. Ճանաչել քաղաքացի Ջավահիր Արամի Խլղաթյանի (ծնված 1950 թվականի փետրվարի 02-ին) սեփականության իրավունքը՝ ժառանգության իրավունքով իրեն պատկանող, Գյումրի քաղաքի Ջափարիձեի փողոցի N 49 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից, ավել օգտագործվող 13.47 (տասներեք ամբողջ քառասունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված հողամասի և նրա վրա առկա շինությունների նկատմամբ:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ջավահիր Արամի Խլղաթյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

19.03.2024

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** X **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«19» Մարտի 2024 **թվականի** N 850-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՌՈՒԲԵՆ ՌԱՖԱՅԵԼՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՆՈՒՇՅԱՆ 7/8 ՀԱՍՑԵՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Ռուբեն Ռաֆայելյանի (ՀՎՀՀ՝ 57240089, գրանցման ամսաթիվը՝ 09.11.2004թ.) 2024 թվականի փետրվարի 27-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի փետրվարի 28-ին 4085-2024 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Ռուբեն Ռաֆայելյանին Գյումրի քաղաքի Մանուշյան 7/8 հասցեում իրականացնել տեխնիկական հեղուկների վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Ռուբեն Ռաֆայելյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

19.03.2024

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2024 թ. ք. Գյումրի**